

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Հասցեն համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисть, Редакция „Мшакъ“.
Այս Tiflis, Redaction „Mschak“.
Տ է լ է Ֆ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Խմբագրութիւնը ընդունում է ամեն լեզուով.

Խմբագրութիւնները համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է լ է Ֆ օ Ն № 253.

Հ Ի Մ Ն Ա Կ Ի Ր Գ Ր Ի Գ ՈՐ Ա Ր Ծ Ր ՈՒ Ն Ի

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Խնքնագործութեան պահանջ.— Ներքին Տե-
ստիութիւն. Մամուլ. Գաղտնիութեան պահանջ
ճիշդ. Նամակ Բաղրուց. Նամակ Խմբագրութեան.
Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՏԻԹԻՒՆ. Ար-
տաքին լուրեր.— ՀԵՌԱՅԻՐՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
թիւններ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հասարակական
նշաններ. Զուր կարեկցութիւն.

ԻՆՔՆԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՊԵՆԱՆԶ

Մի ամսից յետոյ, նոյեմբերի 20-ին, Թե-
լաւ քաղաքում կը սկսի իր պարապմունք-
ները մի ժողով, որի նպատակն է քննել
մեր երկրի հարստութեան ամենանշանաւոր
աղբիւրներից մէկը, այն է այգեգործ-
ութեան ներկայ վիճակը, և մշա-
կել նրա բարելոման համար նպատակա-
յարմար միջոցներ. Այդ ժողովին կարող են
ներկայ լինել բոլոր այն անձինքը, որոնք
զբաղված են այգեգործութեամբ և յան-
կանում են նրա զարգացմանը Թիֆլիսից
կը դնան մասնակցելու ժողովին մի քանի
մասնագէտներ, իսկ նախագահողը կը լինի
գեղարտեստութեան տեսուչ Վ. Գեկիսկի.
Պատրաստված են մի քանի գեղարտեստ-
ներ, որոնք վերաբերում են կովկասեան գինե-
գործութեան զարգացման պայմաններին.
Անշուշտ ժողովի անդամներից է կախ-
ված դարձել իրանց պարապմունքները
լուրջ և համոզեցուցիչ և իրանց ձայնը
լսելի անել այն հիմնարկութիւնների հա-
մար, որոնք կարող են էական օգնել մեր
այգեգործութեան զարգացմանը ժողովում
գլխաւոր կենտրոնը կազմելու են իրանց
այգեգործները և կառուածատէրերը, որոնց
առաջ բացված է ասպարէզ խօսել այգե-
գործութեան մասին ոչ իբրեւ պաշտօնեա-
ներ և նշանակված անձինք, այլ իբրեւ
գործին շատ մօտ և նրա հետ սերտ կեր-
պով կապված գեղարտեստներ. Մենք կա-
մաւ առանձին ուշադրութիւն ենք դար-
ձնում այս կէտի վրա այն պատճառով, որ
մեր գեղարտեստները յաճախ սիրում են
գանգաւորել այն բանի վրա, որ երկրի կա-
րիքների մասին տեղեկութիւնները ժողով-
վում են ոչ իսկական գեղարտեստներից,

այլ գանազան պաշտօնեաներից: Պէտք է
օգտվել ներկայ դէպքից և իսկապէս ցոյց
տալ, որ կարիքների ծանօթ անձը ունի
կարեւոր անկիւններ, որոնք մինչև այժմ
անյայտ էին կամ բաւականաչափ քննված
և մշակված չէին:
Մեր կողմից անհրաժեշտ ենք համա-
րում նկատել, որ Այգեգործութեան
Ժողովը պէտք է մեծ տեղ տայ այն հար-
ցին, թէ ինչպէս անել, որ տեղական
ինքնագործութեան սկզբնական զարգաց-
ման կազմակերպիչը չ'միջամտու-
նայ ժողովին օգնելու միջոցով և մարտաեղ-
այգեգործութեան զարգացման խոչընդո-
տների դէմ: Այն օգնութիւնը և աջակցու-
թիւնը, որ սպասվում է երկրագործու-
թեան միջնորդութեան կողմից, կը մնան
միշտ իբրեւ նպատակ միջոցներ. իսկական
գործունէութիւնը պէտք է կենտրոնանայ
տեղական գործողների շրջանում: Նա կը
լինի հիմնական, ամուր և անխորտակելի:
Նրա տեղական ինքնագործութիւնը կը սկսի
հաստատ ըստ իր անձնական, այն ժամա-
նակ բոլոր այն կատարելագործութիւնները,
որ տալիս են գեղարտեստներ և արտադ-
րաներ գրականութիւնը՝ կը սկսեն մուտք
գործել երկրի մէջ, այն ժամանակ կը հեշ-
տանայ այնպիսի թշնամիների դէմ մաքա-
ռումը, ինչպէս են վաղերի և ծառերի
հիւսնագործութիւնները, կարկուտի կատարի
հարուածները, հարստահարութեան մե-
քենայութիւնները և ուրիշ թէ՛ բնա-
կան և թէ՛ տնտեսական արհաւիրքներ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՏԻԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Թնդանութեան որոտում են Հարաւային Աֆ-
րիկայում. անգլիական պարլամենտը, համարա-
միաձայն, հանգին լրագործութիւններն է տալիս
կառավարութեան, որպէս իր պատերազմը մե-
ծանք միջոցներով առաջ տարվի և յաղթական
լինի. բայց լուսաւորված աշխարհի հասարակա-
կան կարծիքը մեծապէս, չբեղ Բրիտանիային
չէ համակրում, այլ այն փոքրիկ, հոգաբարձ ժո-

ղովորին, որ դժբախտութիւն է ունեցել անգ-
լիական առեւտրի համար մի համեղ պատա-
հառնալու Եւրոպական մասուրը պատապար-
տում է այդ անգլիայի, զարհուրելի արհաւիր-
թիւնը, ապացուցանում է, որ բռնաբար անգ-
լիան, և Մեծ Բրիտանիան ամենագոյնի հա-
շիւներից զրոյթած է արհաւիրող անուամ ինքզ
Տրանսվալիա: Անգլիայիները պահանջում
էին, որ Տրանսվալիա մարդը անգլիացիները
հիշք տարուց յետոյ ընտրողական իրաւունք
ստանան. իսկ բռնաբար համաձայնում էին, որ
այդ իրաւունքը եօթը տարուց յետոյ տրվի: Եւ-
րոպական տարված գաղութներին— և դրա համար
Մակաուի թնդանութիւնը հնում են մարդկանց
չարքերը, հազարաւոր որբեր և արկիներ են լա-
ցեցանում: Երկու տարե... Սա պատերազմը պաշ-
տօնական առիթն է, բայց բուն պատճառը
արդէն յայտնի է ամենքին, և մենք էլ «Մշակ»
մէջ բացատրել ենք ժամանակակից կերպով: Դա
կապիտալն է, որ վճար է Հարաւային Աֆրի-
կայում ըստմանի արհաւիրութիւններով տօնել
իր յաղթանակը: Սեւ, ի հարկէ, և հաս-
նէ իր նպատակին, ինչ գնով էլ լինի: Ի-
տալացի պոպէսը Գուլիէլմո Ֆերրէրօ, խօսելով
«НОВОСТИ» լրագրում տրանսվալիական պատե-
րազմի մասին՝ բերում է վկայութիւն անգլիա-
կան հեղինակաւոր աղբիւրից, որպէս զի ցոյց
տալ կապիտալի կատարած դերը այս դժբախտ
պատերազմի մէջ:

Եւրոպայում թէ՛ պահանջողականները թէ՛
սոցիալիստները միշտ խիստ կերպով մեղա-
դրում էին կապիտալիստներին և կապիտա-
լիզմը, թէ նրանք մարդկութեան շատ չարիք-
ներ են պատճառում, թէ նրանք անդադար
երկպառակութիւններ են սերմանում աշխար-
հի վրա և պատերազմներ են առաջացնում:
Այժմ Եւրոպայում այդպիսի մեղադրանքներ
լսվում են այդ պատերազմի առիթով, որ
այնքան յանկարծակի պայթեց Անգլիայի և
Տրանսվալիայի մէջ:

Սեւ մեղադրողներից մէկն է անգլիացի
Ուիլյամ, որ մի ժամանակ «Times» լրագրի
խմբագիրներից մէկն էր, իսկ այժմ անգլիական
կապիտալիզմի ամենամեծ օրգաններից մէկի
խմբագիրն է, հետևաբար մի մարդ, որ չէ կա-
րող կապիտալիզմի երդուեալ թշնամի համար-
վել: Նա տպագրութեան միջոցով յայտնեց այն
միտքը,

որ անգլիական կառավարութիւնը և մաս-
նաւորապէս Չէմբերլէն ցանկանում են պա-
տերազմ «Chartered Company» ընկերութեան
չանքի համար: Դա մի խոշոր ընկերութիւն
է, որին կառավարութիւնը հովանաւորութիւն
է ցոյց տալիս այն պատճառով, որ նրա մէջ
իրանց կապիտալներով մասնակցում են անգ-
լիական արհաւիրատիւի ներկայացուցիչնե-
րը և մինչև-իսկ թագաւորական ընտանիքի
շատ անդամներ: Առանց պատերազմի «Char-
tered»-ի գործերը չէին կարող ծաղկել, և
Ռոզէլիան (Տրանսվալիայի սահմանակից երկիր),
որ յանձնված է այդ ընկերութեան՝ չէր դառ-
նալ այնպիսի պտղատու գաղթականութիւն,
ինչպէս ենթադրում էին սկզբում: Ռոզէլիայի
անկումը անխուսափելի կը լինէր՝ եթէ ըն-
կերութիւնը յայտնեցնար սարկել Անգլիան,
որ նուաճէ Տրանսվալիա և ընկերութիւնը իր
յայտնի արտօնութիւններով մտնէ աւելի
հարուստ Տրանսվալիա: Բացի դրանից, անգ-
լիական բանակ ունի Տրանսվալիայի ոսկեան-
քերի ակցիաներ մեծ քանակութեամբ, որոնք
չեն վճարվում, ուստի նա էլ բարենաճու-
թեամբ է վերաբերվում պատերազմին, որով-
հետեւ եթէ Տրանսվալիա նուաճվի՝ Նեյտ կը
լինէր կազմել ընկերութիւն՝ Այգեգործների գե-
նը բարձրացնելու համար: Սա նպատակով
էլ, ինչպէս կարծում է Ուիլյամ, փորձեցին
անբարոյականացնել հասարակական կարծիքը,
առաջ բերելով նրա մէջ պատերազմական ո-
գեկորութիւն. և այդ սատանայական մտա-
դրութիւնը, դժբախտաբար, աղողութիւն ու-
նեցաւ:

Այնուհետեւ Ֆերրէրօ մանրամասն խօսում է
բռնաբարի մասին, առաջ է բերում նրանց կու-
տորական առաւելութիւններն ու պակասու-
թիւնները, ցոյց է տալիս թէ ինչպէս հօլան-
դական արեան այդ ներկայացուցիչները հետը-
հետ տեղի էին տալիս անգլիական կապիտա-
լիստների արշաւանքին, և բոլոր բռնաբարի անգ-
լիացումը բայց առ քաղ կատարվող, հաստատ
մի գործ կը լինէր՝ եթէ կապիտալը մի քիչ զըս-
պէր իր եռանդը:

Անգլիական ժողովուրդը, այդքան ստիպո-
ղաբար պատերազմ պահանջելով՝ երկի հա-
մոված է, թէ յաղթելով Տրանսվալիան՝ Աֆ-
րիկայում մարդը բոլոր հօլանդական ցեղերը
կը հպատակեն Անգլիային: Ոգեկորված և կու-
րացած այս կեղծ գաղափարով և պատերազմ-
ական բռնութիւն գործ գնելու անարդար
ցանկութեամբ՝ նա չէ հասկանում, որ նոյն-իսկ
յաղթութիւն տանելու դէպքում են կունե-
նայ վնասներ և կորուստներ, որոնք չուտ ե-
րևան կը դանձ յաղթական երկրորդ մի կարճ

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐ

Ա Բ Օ Ր Ի Գ Ո Ւ Ր Ա Մ

(Նարուակութիւն)

Բայց համաբարութեան սխառնի կուտա-
կիցները ասում են, թէ անաւակութիւնը, ճիշտ
է, չարիք է, ոսկայն անհրաժեշտ չարիք: Եթէ
անաւակութիւնը, աւարկում է տիկին Բէտլէր,
բնական անհրաժեշտութիւն է այդ մարդու հա-
մար, այն ժամանակ նա չէ կարող պատապար-
տելի լինել կնոջ համար:

«Այստեղ, բացառապէս է հեղինակը, ես գի-
տում եմ ուղղակի այդ մարդկանց և հարցնում
եմ նրանց, — հաստատ է քաղաք լուրջ կե-
պով, ձեռնեղ զրաժ խղճիկով, թէ որոշ թիւով
կանանց անբարոյականացումը և ստրկացումը
կազմում են մարդկային ցեղի գոյութեան պայ-
մաններից մէկը: Սեւ եթէ հաւատում էր, պատ-
րաստ էք արդեօք, պարոններ, զոնից այդ հա-
կաւորական օրէնքին ձեր քրոջը, ձեր աղ-
ջկան, ձեր մօրը, ձեր կնոջը: Ո՞վ կը համար-
ձակվի ձեզից պատշաճաբան ինձ դրական կեր-
պով: Իսկ եթէ այդպէս է, հարցնում եմ ձեզ
յանուան արդարութեան, ինչպէս կարող էք պա-
հանջել ուրիշներից այն զուր, որ ոչ ոք ձեզից
չէ ուզում անել: Ուրեմն դուք ստիպված էք
կամ անաւակութեան մասունը ձեր սեփական
կանանց, որոնց պատիւը սուրբ է ձեզ համար,
կամ օրէնք դարձնել այն հրէշային անարդա-
րութիւնը, թէ այդ անարգ և անգութ լուծը

պէտք է դնել ձեր ընկերոջ աղկալի վրա,
որ գրեթէ միշտ լինում է աղքատի զաւակ:
Բայց դուք շատ լաւ գիտէք, որ այդ թշուա-
կանայց մարդկանց աղջիկներ են և մարդկանց
բոյրեր, այնպէս՝ ինչպէս ձեր աղջիկներն ու
բոյրերը: Նրանք այնպէս չեն եկել ի ձեռն անա-
ւակ. նրանք ծնվել են նոյնքան անմեղ, որքան
և ձեր աղջիկները: Նրանք անցրել են իրանց
մանկութեան տարիները մեր գիւղերում, մեր
քաղաքներում, խառն բոլոր մանուկների հետ,
փողոցային խաղերում կամ զարդանկան նստա-
րանի վրա: Պատահական հանգամանքներ, հօր
կամ մօր մահը, ծնողների գործազրկութիւնը
կամ օրավարձի անբաւարարութիւնը, աղքա-
տութիւնը, խաբուսիկ խոստումներ, հրապուրիչ
որդայններ, — հաճախ անկանալ պատճառ-
ները: Աղքատների զուակ լինելով՝ նրանք ա-
ւելի ևս արժանի են կարեկցութեան, որովհետեւ
աղքատները դուր չեն ընտանեկան զգացմունք-
ներից: Այն արցունքները, որոնք թափվում են
աղքատի զագաղի վրա՝ անկեղծ են լինում
միշտ: Արդարացի է այդ արցունքներից: Բանոր
զատակարար զիտել արդէն, որ իր շարքերում
է կատարվում կանանց զարչելի գերեզմանաւո-
թիւնը: Ո՞վ կարող է հաշուել այն բոլոր բարոյ-
ական տանջանքները, որ պատճառում է այդ
գերեզմանաւոթիւնը, այն բոլոր նոցմիքները, որ
զարկեցնում է նա՝ այն ընտանեկաններում, ո-
րոնց անդամներից մէկը կորուստ է մասնավոր
այդպիսով: Մինչդեռ հարուստը վճարում է իր
զուարճութեան գինը և փակում իր հաշիւները,
որովհետեւ նրա համար մի հարց կայ միայն այդ-
տեղ—անարգ սեռադի, որ արհաւիր գին է և
հոգեկան գին...»

Այսպէս էր խօսում քառորդ դար առաջ ա-
բիցիդիոնիզմի առաջնաւոր իր «Մի ձայն անա-
պատի մէջ» գրքով: Սակայն նրա քաղաք
չէ մնաց «ձայն բարձրացնող յանապատի»: Նա ար-
ձագանգ գտաւ զգային ստրկութեան, և շուտով
կազմակերպվեց արդիւնյոյստների մի օրը,
որի շարքում կուտում էին այնպիսի յայտնի մար-
դիկ, ինչպէս Լավրէ, Ժիւլ Ֆալը, Ժիւլ Սիմօն,
Լուի Բլան, և որ իր տարեգրութիւնների մէջ
հաշուում է արդէն այնպիսի մի խոշոր յաղթա-
նակ, ինչպէս «Նովաւորված անաւակութեան»
սխառնի բարձունքը Անգլիայում (1885 թ.):
Այժմ էլ արդիւնյոյստները հաշուում են ի-
րանց կուտակիչները և համակրողների շարքե-
րում յայտնի անուններ: Ժոն Բիլի ժողովում ամե-
նաեւանդուն անդամներից մէկը ֆրանսիական
նախկին միլիտար, չնորհալի հրապարակախոս
Դի Դիլյօն էր, և նիստերից մէկում կարգաց
հաշակաւոր փիլիսոփայ Հէրբէրտ Սպենսէրի նա-
մակը, ուղղված տիկին Բեռտրէլին, որ, չը նայե-
լով իր խորին ծերութեան՝ եկել էր բաժնեկեր
իր աւելի երիտասարդ համախոհներին:

Ժողովին մասնակից եղաւ նոյնպէս և Պարի-
զի ուսանաց դեմոկրատիկ կցորդ իշխան Իւրե-
վիչ, որ ջերմ արդիւնյոյստ է:

Տ. Յովաննիսեան

ԶՈՒՐ ԿԱՐԵՎՈՒԹԻՒՆ

(Պիէր Լատից)

Ամբողջովին կուտած, մէջքից կէս եղած, դը-
նում էր պառաւ կինը լեռնային ուղիով, մէջքի
վրա դարձած չոր ոստերի մի ամբողջ սար:
Հրաշալի երեկոյ էր: Այն տեղը, ուր եւս նրան

պատահեցի՝ առանձնացած էր և գեղեցիկ, ինչ-
պէս եղեմ, որի մասին կարելի է միայն երազել:
Դա էր Guipuscoa, սպանիական Պիրենէյում, նրա
կանաչ անտառներում: Ամեն կողմից լեռների
սքանչելի գագաթները, լուսն և անապատ իրանց
բուսական քոփի տակ, դէպի երկրեւել էին բար-
ձրանում: Ներքում, հովիտում, հոսում է գետակը,
անդարարաճնելով իր հայելու մէջ բաղնիք և
փեղկի ոստիկներն ու տերևները, յուլիսեան
թաթով կանաչը: Իսկ ծաղիկների ծոխութիւնը
այդ շուրջների և սրբիթաղ ջրերի երկրում՝ ներ-
կայացնում էր մի ինչ-որ փառաւոր և հանդի-
սաւոր ճանապարհ թաղուհիների և յաւերժա-
հարսների անցնելու համար:

Բայց պառաւը, ամբողջովին կորած իր բնի
տակ՝ ամենիկն չէր նկատում իրան չքաղապատող
ընտիկան հոյակապութիւնը: Նա ոչ ոք չէր
էր գալիս, երբի դէպի մի ողորմելի խղճիկ, որ-
տեղ նրան չէին սպասում անկասկած ոչ ու-
րախութիւն և ոչ զուէն սիրելի ժպիտ: Նա շատ
յոգնած էր երևում, նրա ճակատի վրա երևում
էին երկու տանջական խորշոմներ: Միննոյն
ժամանակ նրա երեսի արտաշայտութիւնը բարի
էր և շիտակ. մի տեսակ ճնշված և միևնոյն
ժամանակ անդորր: Տեսնելով ինձ՝ նա պատկա-
ռանքով ճանապարհ տուեց, կարծես կամենալով
չնշտել դրանով այն սահմանը, որը պէտք է բա-
ժանէ մի հասարակ մասնականացում, ինչպէս, իր
կարծիքով, ինքն էր՝ պատաւոր անցորդից, որ-
պիսին ինձ էր երևակայում:

Ատուամ իմ, ինչպէս անել, մառաւոր գոնէ
օգնելու համար այդ գոյժ պառաւին: Նստանալ
կարծ սկսեցի սաստիկ խղճալ նրան, երբ հայ-
եացքս հանդիպեց նրա տանջված հայեացքին:

U. 2.
